

ՓԵՂԵՔԵՐՆԵ ՏԵՍՈՒՐԵԴՆԵ

Վիեննա, 25 Փետրուար 1900:

Անգղիա-Տրանսիլաւա: Երկարատեւ
Լորդ Ռոքերտս Անգղիացոց Generalissimo-
տաին վրայ լոր մը կարելի չէր ստանալ.
Նմանապէս իւր սպայակուտին պետը Կիւ-
նրը Փաշա, խորունկ լուծիւն կը պահէր:
Այս քանի մ'օր է, երկու զօրավարք ալ
մեծ ժրուիւն մը կը ցուցնեն պատերազ-
մին արեւմտեան դաշտին վրայ: Լորդ Ռո-
քերտս հաւաքելով այս կողման անգղիա-
կան ցրուած ու ցրցկեած բանակներն՝ իբր
40—50.000 զինուոր՝ փութաց Կիմքըին
զօրավարը տեսնելով Անգղիացոց յառաջ-
խաղացութիւնն՝ ամուսյս սկզբները պաշա-
րումը վերցուց եւ սկսաւ դէպ ի Բլումֆոն-
դէյն՝ Օրանծի մայրաքաղաքը քաշուի,
սակաւ որչափ կ'երեւայ ցրուած բանա-
կաւ, վասն զի մինչ ինք ուներ իւր տակն
շուրջ 15.000 հոգի՝ հազիւ 8000 հոգի այժմ՝
քուր կը գտնուին, իսկ մնացած մեծագոյն
մասն դեռ Կէփլէնդի մէջ են եւ կը ջանան
Ռոքէրտսին նահանջի գիծը ձեռք անցնե-
լու կամ վտանգելու, ետեւ ըլլալով Նաու-
պորտ-Կէփլէնդ երկաթուղւոյն գիծը խան-
գարելու կամ՝ յօդս թողնելու: Կիմքըի
ազատումն՝ Էլանդալստէի յաշողութենէն
ետքը՝ առաջին յաղթութիւնն է, զոր կը
կատարեն Անգղիացիք: Ռոքերտս այնու-
հետեւ Օրանծի ճամբան առջեւն քաց ունե-
նալով կը մտնէ թշուառնոյն երկիրն եւ կը
զբաւէ ճակատադէմ քաղաքը: Անգղիացոց
երկրորդ եւ աւելի ծանրակշիռ նշանակու-
թիւն ունեցող յաշողութիւնն է՝ զՊրոնս
ըստածին նայելով ամբողջ բանակաւ
պաշարելը:

Պրոնս իւր քառապատիկ թշնամոյն
յանձնատուր ըլլալ չէ յանձն առած, եւ
դիցազնական յանդգնութեամբ եւ արիու-
թեամբ կը կռուի դեռ 10 օրէ ի վեր, յու-
սալով որ Ռոքերտս այլուստ օգնութեան կը
հասնին: Այս արիութիւնն ամբողջ աշ-
խարհս յիացուց, եւ մինչեւ իսկ իւր թշնամիք
կը սքանչանա վրան: Կրոնս դեռ կը դի-
մանայ: — Պատերազմին արեւելեան դաշ-

տին վրայ՝ Անգղիացիք մի եւ նոյն յաշո-
ղութիւնը շունին: Բուլլըր փորձեց իւր եր-
կրորդ պարտութենէն ետքն, դեռ երկու
անգամ ալ թշնամոյն գիծը կտորելու,
այս շորորոյդ անգամն է, ետ կը վա-
նուի մեծամեծ կորստով: Լէյդալիթ դեռ
կը դիմանայ թէ՛ն զօրավար Ուայթ ինքզինք
3—4 շաբաթ է չի լսեցնէր: Որչափ կը
տեսնուի պատերազմի բախտը կամաց կա-
մաց ի կողմն Անգղիացոց կը բարեփոխի,
որոնք դեռ անըացատրելի միգեր կը թա-
փեն իրենց բանակն շատցնելու եւ ռազ-
մամթերք փոխադրելու: Պատերազմի դաշ-
տին վրայ այժմ ունին Անգղիացիք 180.000
հոգի. զալ ամսոյն մինչեւ կէսն ունենալու
են 240.000 հոգի: Անգղիա Հունգարիայէն
իբր 5000 մի պիտի գնէ, որոնց 15000 ար-
դէն նա իսկ դրուած են: Աւստրիոյ կառա-
վարութիւնն անտարբեր աչօք կը նայի, եւ
չկզղքութեանս այս խզումը բանի տեղ
չի դնէր:

Աւստրիա: Ամսոյս 22ին Խորհրդա-
րանը քացուեցաւ եւ նոր պաշտօնարանն
իւր ծրագիրը պարզեց, որուն էական կէ-
տերէն մին է երկաթուղեաց շինութիւնը,
առ որ 500.000.000 կրոնէ կը պահանջուի:
Կը յուսացուէր որ նոր պաշտօնարանս իւր
նախորդներէն թիւ մ'աւելի խաղողութիւն
վայելէր, ցորչեփ իւր ծրագրին համեմատն
եւ ոչ մէկ կոռուսկցութեանս կը միտէր,
այլ ամէն խնդիր առարկայապէս պիտի
քննէր, սակայն առաջին նստին իսկ Զէ-
խերն ընդդիմադրութեան տկար փորձեր
ըրին, զորոնք կ'ուզէր շարունակել, մինչեւ
այս պաշտօնարանիս ալ տապալումն: Խոր-
հրդարանին հետ համաժամանակ Ստորին
Աւստրիոյ Գաւառական Ժողովն ալ նստեր
կը կատարէ, ղեպը մը որ շատ ցանցառ կը
պատահէ: Անոր պատճառն է քաղաքական
ընտրութեանց որոնց ժամանակը կը մեր-
ժենայ, նոր օրէնքը: Այս օրինաց համեմատ
200.000 հոգի ալ ճայնի իրաւունք կ'ըն-
դունին, քայց վասն զի այսու ազատակա-
նաց եւ հրէից ապագային կը սպառնա-
ցուի այս վերջինները գիտցան ընկերվա-
րականները զրգռել եւ նոր օրինաց դէմ,
որ դեռ չէ հաստատուած՝ տղայական ցոյցեր
կատարել տալ: — Օրուան խնդիրն է վեր-
ջին ժամանակներս նկայ գործադուլ մը.
Բոհեմիոյ ածխոյ բուլերուն մէջ գրեթէ

80.000 հոգի գործելը դադարեցուցած են. աստեղ կը պահանջեն 8 ժաման օրական աշխատութիւն եւ զնոց բարձրացում. արդարացի պահանջմունք, վասն զի ցայսօր բովերուն տէրերը անխղճօրէն ամենայն կերպով կեղեքած են խեղճ գործաւորները: Անխոյ սակաւութիւնը Պրակի մէջ ճգնաժամ յառաջ բերաւ, բազմաթիւ գործատուներ ստիպուեցան գործը դադարեցունել ածուխ գտնել չկարենալով: Սոյնը կը վախցուէր Վիեննայի համար ալ, որ բարեախառքար չպատահեցաւ: Կառավարութիւնը, որ ի սկզբան անդ միջամտեց, ծնողը բոլորովին քաշեց խնդրոյն մէջէն. այսպէսով գործաւորը դարձեալ իրենց կեղերողներուն ծնոքն ինկան, որոնք ամենեւին զիջում մը չեն յանձն առնուր: Գործադուր դեռ կը շարունակուի, սակայն որչափ կ'երեւայ գործաւորը յաշնդուիին պիտի չունենան:

Դադողիս: Ժերակուտի սրահն ամառայս ընթացքին մէջ անգամ մ'ալ դատարանի փոխուեցաւ: Դատաւորն էր Աբէր Դորուլէդի բարեկամս: Անկախ, Գաղղիայէն փախչելէն ետքը՝ յանդգնութիւն ունեցաւ դառնալու եւ իրեն դատաւոր փնտռելու, եւ գտաւ միայն իւր կուսակիցները դատապարտող կատաղի ծերակուտականներ: Այս միջոցին նորրոնտիւր ծերակուտականներն յորս եւ Մերսիէ գորավարը, շնոց որոշմամբը՝ բացակայ էին Նիստերէն, այսպէսով կարելի եղաւ գտնել փոքր մեծամասնութիւն մը՝ զԱբէր դատապարտելու համար: Աբէր դատապարտուեցաւ 5 տարւան արտոյի:

Ռուսիս: Պատերազմի պաշտօնէին Անգղիոյ տազնապէն օգուտ քաղելու առաջարկը Ռուսիոյ Զարն խստիւ մերժեց, յայտնելով որ ցարչափ Անգղիացիք պատերազմի մէջ են խուսաացուած չէգործութեան դէմ քայլ մ'ալ պիտի չառնուի: Ոչինչ ընդդէմ ասոր Ռուսիա իւր հարաւային սահմանները կը զօրացնէ եւ այսօր Հոլկաստանի սահմանազլխին վրայ 130.000էն աւելի զօրաւոր բանակ մ'ունի: Բուրերուն համակրանքն Ռուսիոյ մէջ շատ ծծե՛ Է. արդեւք կարելի պիտի չլլայ վերջին բայց յարմար վայրկեանին Անգղիացոց վրայ ճնշում մ'ընել եւ Ս. Ստեֆանոյի վրէժն լուծել...: — Ռուսիոյ քաղաքա-

կանութիւնն Ասիոյ մէջ յաղթական քայլերով կը յառաջանայ: Պարսկաստանն ալ եւս քան զեւս Ռուսիոյ ազդեցութեան տակ կ'իյնայ. վերջին փոխառութեամբ մը Պարսկաստանն ալ բոլորովին Ռուսիայէն կախուած է կրնանք ըսել: Ռուսիա հաւանեցաւ առաւ Պարսկաստանի 62,000.000 Ֆրանկ պայմանաւ որ ուրիշ տէրութեանց ունեցած պարտքերն այսու ջնջուին: Այս հարուածն ուղղուած է զլիսաւորաքար Անգղիոյ դէմ, որ ալ այսու իւր ազդեցութիւնը կը կորսնցնէ բոլորովին Պարսկաստանի մէջ: Անկորդ է ըսել որ Պարսկաստան Ռուսիոյ ծնոքն այսու խաղալիք մը կը դառնայ, վասն զի նկատելով իւր դրամական խեղճ վիճակն շատ դժուարաւ պիտի կարենայ այս փոխառութիւնը ժամանակին հատուցանել:



ՔՐԻՍՏՈՒԿԱՆ ԹԻՒՆ

ՌԵՍԻՍԻՆԵՆ

ՀԱՆՈՍՈՒՄԱՆՆԵՆ — Երկրորդ տեղեկագիր ուղեւորութեան հիւն եւ Լեման գետնականաց. 85:

ԼԵՃՈՒՄԱՆՆԵՆ — Սրբի լեզուագիտութիւնը. 68: ՄԱՅՆՆԵՆՈՍՈՒՄԱՆՆԵՆ — Ժողովածոյց առակաց Վարդանայ, Նիւթեր պատմութեան հայոց միջնորդութեան մասնաւորութեան ըստ հայագէտ Նիկ. Մարի 72:

ԳՐԱՆՆԵՆ — Ազգագետնութեան եւ իւր Երկրորդականք առ Յուստինիանոս. 77:

ՄԵՆՆԵՆՈՍՈՒՄԱՆՆԵՆ — Հայաստան, Արարատսան եւ արեւմտեան Պարսկաստան՝ քաղաքական-աստիճանական սեպագրերու համաձայն. 81:

ՄԱՅՆՆԵՆՈՍՈՒՄԱՆՆԵՆ — Գէորգեան (ճոռուեցանք) Բարդուղիմէոս Վրդ., Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ. 86:

ՆԱԽԻՆԵՆ

ՆՈՐ ՀՐԱՄԱՆԱՎՈՐՈՒԹԻՒՆ. 89:

ԱՋԳԱՅԻՆ ԹԵՐԹԵՐԻ ԺԱՆՆԵՐՈՒՄԱՆՆԵՆ — 2. «Չ. Բարդուղի Նոր Թարգմանութիւնը: — 2. «Չ. Հայրենեաց տեղեկութեան: — 3. «Ժողովուրդաբան: — 4. Նոր եւ ին լրագրաց մասին փափակներ: — 5. «Թատրոն: — 6. «Բիւզանդիոնի հազարթուական: — 7. Վ. Փ. Միլլերի գիտական գործունէութեան 30 ամեակի: — 8. Անաւթալքի երկրաշարժը: — 9. Պր. Գր. Հանշման արդեամբք քաղաքաւորութիւնը որքանոցը. 92:

ԲԱՆԻՆԵՆ 86: ՆԱԽԻՆԵՆ 86:



ՀՐԱՄԱՆԱՎՈՐ ԵՒ ՊԱՄԱՆԱՆԱՅԻՆ ԽՄԱՐԱՅԻՐ

Վ. ԲԱՐԴՈՒՄԱՆ Գ. ՊԱՐԴՈՒՄԱՆ

ՎԻՆԵՆ, ԵՒ ԲԱՐԴՈՒՄԱՆ ԳԱՐԴՈՒՄԱՆ